

# ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻՆՈՆ ՆԱՄԱԿԱՆԻՇՆԵՐԻ ԲԱՑԱՌԻԿ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՈՒՄ

Posted on May 10, 2023 by Keghart



1935թ. Հանրապետության անկախացումից հետո գոյություն ունեցող «Պեպոն» ֆիլմը՝ ըստ անվանի թատերագիր Գարրիեի Մուստուկյանի համանուն պիեսի: «Պեպոն» հայկական առաջին ձայնավոր ֆիլմն էր, որի երաժշտությունը գրեց Արամ Խաչատրյանը, իսկ գլխավոր դերերը կատարեցին հայկական թատրոնի հայտնի դերասանները

Category: [Opinions](#)



**Նառա Դանիելյան, Երևան, 3 Մայիս 2023**

Այս տարի հոբեյանական և հայկական կինոյի համար. տոնում ենք նրա հիմնադրության 100-ամյակը:

Հոբեյանական միջոցառումների շարքում հիրավի բացառիկ էր Հայաստանի կինոգործիչների միության «Ազգային Սինեմատեք» թանգարանում բացված և



Հայկինոյին նվիրված սամականիչների ցուցահանդեսում: Այն հանրության դատին հանձնեց սամականիչների հավաքածուի հեղինակ Ժան Գյուլբենկյանը:

Հայաստանի կինոգործիչների միության նախագահ Հարություն Խաչատրյանը ցուցահանդեսի բացումը կատարելով, մասնավորապես նշեց. «Բացում ենք մի ցուցահանդես, որը հրաշալի մի մարդու, մտավորականի տարիների աշխատանքն է: Իր հոգևորությունն այսօր մեզ պարզևում է երջանկություն»: Դիմելով պարոն Գյուլբենկյանին, նա ավելացրեց. «Շնորհակալություն Ձեր արած գործի և Ձեր անգնահատելի նվերի համար: Ձեր հավաքած սյուլթերը սերունդներին ժառանգ եք թողնում թե՛ այս թանգարանում, թե՛ Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում»:

Մասնագիտությամբ քիմիկոս, գիտության թեկնածու, համալսարանի դասախոս,

### Ռոզենտ Ժան Գյուլբենկյանը բազում տարիներ

խնամքով հավաքել է հայկական կինոյի պատմության յուրօրինակ վավերագրերը: Բացման հանդիսության իր խոսքում նա ընդգծեց. «Այս տարին հատուկ է հայ կինոգործիչների համար: Ես կինոգործիչ չեմ, բայց մեծ կապ ունեմ կինոյի հետ: Այդ կապը ՍԵՐ-ն է: Հայկական կինոյի 100-ամյակին եմ նվիրում իմ 48 տարիների հավաքչական աշխատանքի այս ցուցահորությունը: Ես հավաքել եմ ամեն նյութ, ամեն մանրուք որ վերաբերում է հայկական կինոյին ու կինոգործիչներին, գովազդում նրանց: Փոքր տարիքից եմ սկսել հավաքել: Օգնում էին ծնողներս»:



Ցուցահորությանը ներկայացված են ոչ միայն հայկական կինոյին, այլև համաշխարհային կինոյին աղերսվող ևամականիշներ: Ցուցահորվում են նաև ևամակներ հայտնի մարդկանց ձեռագրով գրված: «Ինձ համար կարևոր են Սերգեյ Փարաջանովի, Համո Բեկնազարյանի, Հենրիկ Մայանի, Արամ Խաչատրյանի ու հայ մշակույթի եւ արվեստի այլ երևելիների ձեռքով գրված ևամակները», - ասաց պարոն Գյուլբենկյանն ու ավելացրեց, որ իր համար, կինոն ոչ միայն կինոբեմադրիչներն էին ու դերասանները, այլև բեմագիրները, նկարիչները, երգահանները, ձևաւորողները, նկարահանողները, դիմահարդարները եւ ամեն ոք որ դույզն իսկ առնչություն է ունեցել ֆիլմերի ստեղծման մեջ:



ևամականիշները հավաքելուն զուգահեռ Ժան Գյուլբենկյանը երիտասարդ հասակից կարդում է կինոյին առնչված գրականություն և պարբերական մամուլ, դրանց մեջից դուրս գրում կարևոր համարած տեղեկությունները: «Ես ունեմ տասնյակ տետրեր

աշխարհի հայտնի կինոգործիչների մասին գրառումներով», – ասում է պարոն Գյուլբենկյանը:

Նամականիշների բացառիկ հավաքածուի հեղինակը նաև փաստում է. «Այս ամբողջ հավաքածուում ունեմ եզակի նմուշ, որի երկրորդը գոյություն չունի. դա Համո Բեկնազարյանի «Ձարե» ֆիլմին վերաբերող նամականիշն է»:



Այս նյութերով, բացիկներով, նամականիշներով երևան է գալիս հայկական կինոյի պատմությունն իր համապարփակ ընդգրկմամբ: Ցուցանմուշներում ներկայացված են Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և արտասահմանյան այլ երկրների հայազգի կինոգործիչները, որոնք իրենց ներդրումն են ունեցել կինոարվեստի պատմության մեջ:

Բացման հանդիսության իր ելույթում կինոգետ Դավիթ Մուրադյանը, դիմելով պարոն Գյուլբենկյանին, ասաց նաև. «Այս Ձեր ամբողջ կյանքի նվիրումն է՝ մեծապես հաջողված»:

Ցուցադրության բացման հանդիսությունները սերակական կինոգործիչներ, մտավորականներ, լրագրողներ, ուսանողներ, կինոարվեստի սիրահարներ:



Ցավոք, եզակի ու բացառիկ այս ցուցադրությունը լայն հասարակայնության առջև բաց մնաց ընդամենը հինգ օր (ապրիլի 13-ից 17-ը):

Ցանկալի է, որ Հայաստանի կինոգործիչների միությունը ժան Գյուլբենկյանի հավաքածուի ցուցադրություններ կազմակերպի ՀՀ մարզերում, ինչո՞ւ չէ՝ գործակցաբար ՀՀ գիտության, կրթության, մշակույթի և մարմնամարզի նախարարության ու ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների հետ՝ նաև հայկական գաղթօջախներում:



**There are no comments yet.**